# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 231

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Աղնջաձոր բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ*

*(Եղեգիս համայնքի Աղնջաձոր բնակավայրի գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

*Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝*

*ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Աղնջաձոր բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Վայոց ձոր-5 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| *Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը* | *Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը* |
|---|---|
| 10-007-0155-0009 կադաստրային ծածկագրով 0.1538 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող | 10-007-0155-0009 կադաստրային ծածկագրով 0.1538 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր |

1. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

2. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով.

- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված պայմանը (կցվում է),

4. ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Աղնջաձոր բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Աղնջաձոր բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | [signature] | Ա. Ղուլարյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | [signature] | Հ. Դավթյան |

Երևան, « 14 » «հոկտեմբերի» 2022թ.